այդ պատճառով ամէն ինչ տխուր է եւ անբնական, ներուժ է եւ հոսուն, ծանր եւ նետի նման արագ։

Բարեբախտաբար, մեր քայլերը չեչտ են տալիս արտաքոց այս իրականութեան եւ քամին իր լայն թեւերը դաղտագողի շարժում է տարածութիւնը աւելելով։

Երբեմն, հեռաւոր տեսարանների շարժապատկերները գալիս կուտակւում են ենթագիտակցութեանդ մէջ, իջնում են հոգուդ խորքը եւ, ամբողջ երկրագունդը յետ մղելով, տանում են քեզ դէպի անորոշը։

Վերջ ի վերջոյ, ոչ մի նոր բան չենք տեսնում։

Բոլոր վայրերից արդէն անցել ենք։ Անցել ենք եւ այս վայրերից, որոնք թաքցրել են իրենց բովանդակութիւնը եւ կորցրել իրենց ձեւը, եւ ահա — մեռած ծովի նման — արտացոլում են երկինքները։

Օդն էլ ծանր է։

Կարծես օդ չէ, այլ ինչ որ չափազանց նիւթական մի բան, որ թոքերս հրաժարւում են ընդունել։

Արագացնում եմ քայլերս։

— Շտապելու պէտք չկայ, աւելի լաւ է տեղ հասնենք առանց յոգնելու,— ասում է ուղեկիցս։

— Ոտքերս ակամայ վազեցին։ Արդեո՞ք պատճառը առաջին աստղն է, որ նշմարեցի հորիզոնի մօտ։ Դեռ մութ էլ չէ։

— Ոչինչ, ժամանակին կը հասնենք։

Ու նորից գլուխներս վար ձգած՝ քայլում ենք։

— Ձեմ հասկանում, ինչո՞ւ մարդիկ լիճը լքած են։ Ելենովկայից մինչեւ այս ծայրը լճի ափին ոչ մի բնակչութիւն կայ եւ ոչ մի գիւղ։

— Երեւի ցուրտի եւ քամիների պատճառով։ Հայը սիրում է պատսպարուել, իսկ այստեղ ամէն ինչ բաց է...

Պատասխանում է եւ աչքերը յառում խորհրդաւոր աստղի վրայ։ Յետոյ —

— Կը գայ ժամանակ, երբ ամայի այս ափերը կը ծածկուեն բարձր ծառերով, հովասուն պարտէզներով, այնպէս ինչպէս Ղրիմի կամ Սեւ ծովի ափերը։ Մենք պէտք ունենք հանգստի եւ պէտք ունենք փողի, չա՜տ փողի։

— Քաղքենի երազներ...

— Ժողովրդի կա՛մքը։

— Եթէ ժողովրդի կա՛մքը լինէր՝ նա վաղուց այդ կ՚իրագործէր։ Այն ինչ որ մենք անուանում ենք ժողովուրդ՝ անանուն, գրեթէ անմարմին այդ մասսան՝ մեծ մի երեխայ է, երազկուն աչքերով։ Նա խաղում է հէքեաթի եւ առասպելի հետ ինչպէս ռետինէ գնդակի հետ։

Ընկերս չի պատասխանում։ Ձեռնափայտը շարժում է օդի մէջ, պտտցնում, վեր ցըցում, կարծես ուզում է սպառնալ։

— Ի՞նչ ծանր է լռութիւնը այստեղ, ասես մարմին է առել՝ թանձր է։ Մտածել, որ կարելի է այդպէս անվերջ գնալ, մենութեան այս աշխարհում, առանց մարդու հանդիպելու։ Եւ սակայն՝ նկատա՞ծ էք՝ չկայ ուրիշ մի երկիր այդքան լեցուն անմարմին, բայց ակներեւ ներկայութիւններով։

— Ձեմ հասկանում։

— Դժուար է բացատրել... Ահա տեսէք, մենք գնում ենք։ Երեկոյ է, գրեթէ մութ։ Հեռուում աստղը, իսկ այստեղ՝ ծանրաքայլ մեր ոտքերը կոպճուտ այս ճանապարհի վրայ, սրածայր քարերին են բաղխում։ Մեր թոքերը, օդաչափական դործիքի նման, օդի ծանրութիւն են կրում եւ երկրի բարձրութեան աստիճանը զգացնում։ Արդ, քանի մարդ բարձրանում է, այնքան միայնանում է։ Զգում է իրան մինակ ու որբ՝ որբ այս վայրերում, ուր քամին ոչ մի ծառի կատարին իր գլուխը չի թափահարում ,ոչ մի ծիներլոյզի շուրջը չի պարում ու ոչ մի պատի առջեւ չի սողոսկում։

Եւ դուք, որպէսզի ձեր մինակութեան դաժան մերկութիւնը ծածկէք, երեւակայում էք երազային ապագայ մի իրականութիւն։ Մերկ ձեր սենեակը լեցնում էք կահ կարասիներով։ Լիճի չորս կողմը կառուցում էք գեղեցիկ վիլլաներ, տնկում էք մեծ պարտէզներ եւ մինչեւ ջուրը երկարած ճիւղերով բարձր բարտիներ։ Մի քիչ այնպէս, ինչպէս նկարուած է ածան այն նկարների վրայ, որոնք քաղքենի ընտանիքների պատերի վրայ անկարելի հարբստութեան ձեւ են առնում։ Կամ, աւելի շուտ, ձեր միտքը նմանում է ամերիկեան թերթերի այն ծանուցումներին, որոնք հովասուն

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան